

ՏԱՄՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Менкъ».
Կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Մեր լրագրները. — ԵՆԻՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց թատրոն. Նամակ Ալեքսանդրապոլից. Երբ քին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գերմանական քաղաքատնտեսների ժողովը. Արտաքին լուրեր. — ԽԱՒՆ ԼՈՒՐԵՐ. — ՀՆՈՒՎԻՐՆԵՐ. — ՅԱՏՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թեւրէշապոլից.

ՄԵՐ ԼՐԱԳԻՐՆԵՐԸ

II

Մենք ասացինք մեր անցեալ համարում, որ երկրորդ պատճառը որ «Մշակի» հետ ոչ մի ուրիշ հայոց լրագիր անկարող եղաւ մրցելու, այն էր, որ «Մշակը» հայոց ժամանակակից ամբողջ մամուլի մէջ միակ առաջարկէր թերթի էր:

Ի՞նչ ենք հասկանում առաջարկէր բառով:

Մարդկային հասարակութիւնը, ինչպէս բնութեան ամեն երևոյթ, չէ կարող անշարժ մնալ. գոյութիւն ունենալու համար ամեն մարմին, ամեն օրգանական կազմուածք, ամեն հասարակական կազմակերպութիւն պէտք է անընդհատաբար նորոգել իր ոյժերը: Եթէ մի մարմին անդադար նոր սնունդ, նոր ոյժեր, նոր նիւթեր չընդունի, — նա հետզհետէ կը մահանայ: Եթէ մի հասարակութիւն անընդհատաբար չը վերանորոգուի, նա հետզհետէ կը սկսի լուծվել, քանդվել, քայքայվել, ոչնչանալ, կամ գոնէ յետադիմել: Բնութեան մէջ ոչինչ բան անշարժ չէ կարող մնալ. կամ պէտք է առաջ գնալ, աճել, զարգանալ, — կամ պէտք է ստանալ:

է յետադիմել, քայքայվել, ոչնչանալ, հետզհետէ մահվան մօտենալ: Մի և նոյն կէտում անշարժ մնալ անկարելի է, կամ պէտք է առաջ գնալ, կամ յետադիմել: Կենսի մէջ ոչինչ չը կայ անշարժ, և նրանք, որոնք իրանց պահպանողական կարծեղով պահպանում են և հասարակութիւնը անընդհատ անշարժութեան մէջ, չեն նկատում որ այդ անշարժութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ յետադիմութիւն, քայքայումն, կործանումն:

Մեզ ամեն բան քանդող են համարում այն խառնամիտները, որոնք մտաւորապէս այն աստիճան անզարգացած են, որ կարծում են թէ հնար կայ որ և է բնական կամ հասարակական մարմին զարբերով, նոյն իսկ տարիներով մի և նոյն անշարժ դրութեան մէջ պահպանելու, կարծում են որ հնար կայ մի որ և է մարմին իր բնական զարգացման, իր աճման մէջ կանգնեցնելու, առանց վնասելու նրա գոյութեան, առանց նպատակելու այդ մարմնի յետադիմութեանը, քայքայմանը և վերջ ի վերջոյ նրա լուծմանն ու ոչնչանալուն:

Ուրեմն ինչպէս մի կազմուածք պահպանելու համար, այդ կազմուածքին պէտք է անդադար և ամեն որ սնունդ տալ, ինչպէս մի վառարանի մէջ մշտական կրակը պահպանելու համար պէտք է անընդհատաբար վառարանի մէջ աւելցնել վառելիք, այնպէս էլ մարդկային կազմակերպութիւնը պահպանելու համար, ազգի գոյութիւնը պահպանելու համար պէտք է անընդհատաբար առաջարկել, պատուաւորել նրան, մոցնել նրա կենսի մէջ նոր մտքեր, նոր իդէալներ, նոր ոյժեր, նոր տարրեր, նոր ետերով, և թող այդ փաստերը իրանք ամեն բան պարզեն:

նույնիսկ, նոր հաստատութիւններ, նոր հասարակական կազմակերպութիւններ... Իսկ դրա համար, այսինքն նորը մտնելու, պէտք է անդադար հետադարձել. քննադատել հինը, վերջնել այդ հինը և նրա տեղը անդադար նորը դնել: Այն բոլորէն երբ կը դադարէր այդ անի, — կենսի էլ ինքն իրան կը դադարէր հասարակական կազմակերպութեան մէջ, ինչպէս օրգանական մարմնի մէջ կը դադարէր կենսի այն օրից, երբ դուք կատարելապէս կը դադարէր այդ մարմնին որ և է կերակուր տալ:

Մեր պահպանողական ստիճան մամուլը վարվում է հայոց ազգի հետ այնպէս, ինչպէս փորձել են իրանց անձի հետ վարվել դոկտոր ճաննէր և պրոֆէսոր Չուկիլի. — բառաւոր, յիսուն օր ոչինչ չուտել: Բայց սրանք այդ բոլոր օրերի ընթացքում գոնէ ջուր են խմելու եղել և իրանց աւերել փորձը մի ու կէս ամիսից աւելի չեն շարունակել: Իսկ մեր հասարակական կենսի ղեկավարողները ուզում են որ ազգը դարբերով մնայ մի և նոյն անշարժ դրութեան մէջ, սնվի այն մտաւոր ու հոգեկան սնունդով որ նա ընդունել է մի ժամանակ, այն է յետադիմել, — այդ տեսակ գործողութիւնը բացասական գործողութիւն է:

Ի՞նչ կասէիք մի մօր մտան, որ ասէր իր որդուն. «Քո մի կամ մի ու կէս տարեկան հասակում ես քեզ բաւական կերակուր եմ իմ կաթով, ուրեմն այսուհետեւ, քո ամբողջ կենսիւմ այլ ևս հարկաւոր չէ քեզ հայ կամ միս ուտել. քո մանուկ ժամանակ քո կերած կաթով պէտք է այսուհետեւ ամբողջ քո կենսիդ կուշտ լինես և

այլ ևս չը պէտք է մինչև կենսիդ վերջը ոչինչ սնունդ տաս քո ստամոքսին:»

Պարզ է որ հինը վերջնելու և նորը առաջարկելու համար պէտք է քննադատել, խտրութեամբ քննադատել կենսի հնացած ձևերը, պէտք է քննադատել և եղած երևոյթները, մտարկել վնասակար երևոյթները, առաջարկելու համար խոչնդող կազմող կենսի վնասակար կողմերը: Մասին ծնվում է մտքակող, ինքնաբնուող խիստ, անինսպ գրական ուղղութիւնը: Պարզ է որ այդ ուղղութեանը հետեւելով գրականութիւնը կամ լրագրութիւնը ստիպւած է շատ անգամ վերադառնալ ժամանակակիցներին, ինքնասիրութիւնը: Բայց ուրիշ կերպ անկարելի է մի ազգի, մի հասարակութեան բարոյական, հոգեկան և մտաւոր վերածնութեան զարգացումը սկսելու միշտ խիստ և անինսպ ինքնաբնուութեամբ:

Անդադար պահպանել հինը իր առաջվայ անշարժ դրութեան մէջ, չը թող տալով որ մազի չափ փոխվի եղած դրութիւնը, դրանով ուրեմն նպատակ հասարակական կենսի վերադարձնելու որ չէ կամենում առաջ գնալ, չէ կարող անշարժ մնալ, այլ պէտք է յետադիմել, — այդ տեսակ գործողութիւնը բացասական գործողութիւն է:

Հինը քննադատել, աշխատել վերջնել քանդել և նրա տեղը նորն առաջարկել, ջանալ անդադար առաջ մղել հասարակութիւնը, անընդհատաբար նոր մտքեր, նոր իդէալներ մտնել հնացած կազմակերպութեան մէջ, — նշանակում է ստեղծել, ստեղծագործել, ուրեմն այդ տեսակ գործողութիւնը դրական բնույթի ընդունելի է:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՆԱՄԱԿ ԹԻՐԻՔԻԱՅԻՑ

Մուշ, սեպտեմբերի 10-ին

Հողային հարցը օրից օր աւելի և աւելի ծանրակշիռ բնաւորութիւն է ստանում թիւրքա-Հայաստանի մէջ: Գործա առաջ երկրորդական նշանակութիւն են ստանում այն բոլոր աւարաւորութիւնները, կողպուտները, սպանութիւնները և աւազակութիւնները, որոնք վաղուց սկսած ճնշում են խաղող ժողովուրդը քրիտ հրտակների և իշխանութեան անընդունակութեան շնորհիւ: Հողային հարցի այդ ծանրակշիռ դրութիւնը թիւրքա-Հայաստանում չէ բղիւում ոչ տիրապետութեան և ոչ էլ տնտեսական-օտերալական վաղուց կենսի ունեցող կարգերից. դա հետևանք է ներկայումս մեծ մասամբ այն ձգտումների, որոնք մի քանի ժամանակ է սկսված են: Այդ ձգտումը շատ պարզ քաղաքականութեան արդիւնքն է. — խել հայերից հողերը, քրիտներին և ուրիշ այդպիսի ցեղերին հողատէր դարձնել. — ուրեմն զոհել հայ տարրը իր գոյութեան ամենագլխաւոր ոյժից. դա մի ամենավստահաւոր ձգտում է, որը ամենապարզ կերպով արտայայտվում է ամենայն քայլափոխում, և որը մեծ վրտանդ է սպառնում հայ ժողովուրդին թիւրքա-Հայաստանում...: Լուծանքակ ցեղերն են գլխաւորապէս այդ քաղաքականութեան տեսանկի ներկայացողները. պատուէրները հեռուից են գալիս: Իսկ Պոլսի Պատրիարքարանը, Պոլսի երկտասարդութիւնը, թիւրքա-Հայաստանի ռոզտորակա նութիւնը զբաղված են և շարունակվում են զբաղվել զանազան առաջնորդական, վարդապետական, ամուսնական և այդպիսի երկրորդական խնդիրներով միմյան: Զարմանալի է, ինչ էր քարոզում մի ժամանակ «Մշակը» միացած ուրիշ մի քանի կենդանի ոյժերի հետ, հողային հարցի մասին և այժմ ինչ ենք տեսնում. անտարբերութեան և անհետաւորութեան պատճառով զերեքը փոխված են... Սակայն զիմենք փաստերին, թողնենք անցալը. բաւականանալ մի քանի ամենանոր փաստերով, և թող այդ փաստերը իրանք ամեն բան պարզեն:

...Գաղտնի բազմութիւն զանազան գաղթականներին տաճկաց կառավարութիւնը մեծ ուրախութեամբ ընդունեց հարկաւոր եղած ժամանակ գործածելու իր նպատակներին համար: Գործա մէկ մասը տարածեց Հայաստանում, որոնք կառավարութեան միջոցով հայոց հողերի վրա բնակութիւն հաստատեցին:

Առաջ քերհնք մի քանի սովորական օրինակներ:

Մշոյ դաշտի արեւելեան կողմում գտնվում է Գաղտնք սարը (պատմական Տարձն սարը), որի գագաթնայրում գտնվում է մի հայ գիւղ Արտերտ անունով, 90 տուն բնակչով, որոնք վայելում էին գեղեցիկ սարերի և հովիտների վայելչութիւնները: Տաճիկ կառավարութիւնը վնասակար համարեց այդպիսի մի գիւղ հայերի ձեռքում պահելը, ուստի մասնացրեց արեց չէջններին դրակ նոյն գիւղի սեպական հովիտները: Գրանք Արտերտից ոչ այնքան հեռու բնակութիւն հաստատեցին և սկսեցին հայերի մարդագետներին խտրել քաղաքի: Հայերը փորձեցին արեւելու, սակայն չէջնները զինված յարձակվեցան հայերի վրա, որոնք պաշտպանվեցան իրանց գերադիմելով, մանաւորներով, քարերով և այլն... բայց չը կարողացան դուրս հանել իրանց սահմաններից չէջններին:

Ինքն զիրարցին կը վարէր, կը սիրմանէր, կը մշակէր, ապա իր գերանդին և մանազը կառնէր գնալու քաղաք, ստանալու իր գերադատանի սնունդը, կենսից: Սակայն թշուառին ներկայանում էր արեւնի գնով մշակած արտը բոլորովին մերկ, որովհետև չէջնները զիւրեք քարով տանում են Գիւղացին այդտեղից կտրուելով դէպի իր չայրները հնձելու կամ բարդերը փոխադրելու գիւղ, բայց նրանց ևս չէր գտնում Յանկարծ օրը ցերեկով խմբովին գալիս գիւղի մօտից նախիրը բաժանելով՝ բլում տանում:

Արտերտիցը զիմենցին կառավարութեան, որը ուշադրութիւն չը դարձրեց: Հայերը մնացին անձար, առաջնորդ չունէին, որ իրանց բողոքը, իրաւունքը պաշտպանէր (?) իսկ սահմանադրական առաջնորդարանի ազգային և քաղաքական ժողովի անդամները ցրուած են...

Նրանց մնում էր միայն մի հնարք, այն է տաճկական կառավարութեան յատուկ ցեղով (կաշաքով) իրանց նպատակին հասնել, այսինքն չէջններին իրանց սահմաններից հեռացնել: Այնուհետև սկսեցին գաւառապետի և դատաւորների գրպաններն լցնել իրանց քրտիքով վստակած փողերով, որոնցից խոստումներ է լինում աշխատելու. բայց այդ խոստումը լինում է միայն դրամ ստանալու ժամանակ, իսկ վերջը սկսում են դանազան պատճառներ բերել, թէ այժմ ուրիշ գործով ենք զբաղված, կամ այս ինչ պաշտօնեան այստեղ չէ, գայ յետոյ, և կամ յայտնել արտուղներ, թէ դու այս ինչ պաշտօնեային շատ փող ես տուել, ինձ քիչ: Հայ երկրագործը լցնում է պաշտօնեից իրազմաններն. ինչ անի, կենսից խնդիր է: Այսպիսով խեղճ գիւղացիը զրկվելով ժամանակից, աշխատանքից, դրամից՝ շարժվելով, ամբողջով, տարիներով շարունակ ման են գալիս կառավարութեան դուռն, պաշտօնեից տները, բայց այնու ամենայնիւ նոցա լացը ու կոծը լսող չէ լինում...

Մուշ գտնվող միշտ կը պատահի մի կարճահասակ, հաստ, սև դէմքով, մեծ թթով մէկ քանակով, որը վերաբրուի փէջերը ուսերը ձգած, արեւնիցը ոտին, ցուպը ձեռին, տրորելով ցեղին ու ձիւնը, կրելով տօթն ու ցուրտը, Մշոյ դաշտի կիրող արեւը, մանում է Մուշ, մտնում է կառավարութեան ատենաները, շարունակ ներս ու դուրս անելով մէկ սենեակից միւսը, կամ գլուխը կախած շտապում է առաւօտները շուտով գնալ պաշտօնեից տները: Դա Արտերտի քանանայ տէր-Աւետիսն է, որ չորս տարի շարունակ շարունակ է իր ժողովուրդին հետ: Այս չորս տարուայ մէջ հազիւ նա գիւղական եկեղեցու դուռը բացած ունի: Նրա գաղափարը բարոյովին այլ է մեր միւս քանանաների գաղափարներից, նրա կարծիքով, հողերը դուռն հետ պէտք է բաց լինի և տնտեսականը: Այս ժողովուրդական հովիւր տուկուն է նեղութեանց և յանդուգն վրէժներութեան մէջ: Իր գրպանից անազնի ծախս արած է, ժողովրդական դրամ ծախսել է 400 ոսկի (4,000 ռուբլի), մէկ անհայրի դուռնար հայ երկրագործ գիւղի համար: Բայց այնու ամենայնիւ, խեղճերի գաւան մինչև այժմ չէ վերջացած:

Չէջնները լաւ հասկանալով իրանց հակառակորդների գլխաւորին (քանանային), որ շարունակ պիտի կռի իրանց հետ, խորհում են նրան սպանել, որպէս զի նրանից ազատուել: Խորամանկութեամբ կանչում են իրանց մօտ գործը վերջացնելու պատրուակով: Քանանան միամտութեամբ գնում է և երբ յարձակվում են սրախողխող անելու, քանանան հազիւ ազատվում է և կարողանում հասնել իր գիւղը:

Անցեալ գարնան Արտերտի քանանան յուսահատված, տաղալիցացած զիմում է Մշոյ միջխասարիֆ փաշային, գայրացած առաջարկելով վերջնական պատասխան տալու: Միտրոպոլիտը խիստ էր, գաւառապետը այլ ևս չէր կարող պատճառների զիմելու ուստի պատասխանում է չէջններն պէտք է մնան նոյն հողի վրա, բացի նրանցից մի ուրիշ խուճը ևս պէտք է ձեռ կողմերը գայ բնակուելու, դուք հող շատ ունիք:

Քանանան պատասխանում է, «եթէ այդպէս է, մենք բոլորս կը գաղթենք ձեր հողից»: Փաշան իսկոյն պատասխանում է, «ճանապարհը բաց է ձեր առաջ, ուր որ կամենում էք դնացէք...»: Քանանան անպատուելով գաւառապետին զիմում է իր գիւղը և յայտնում ժողովուրդին, որ պէտք է գաղթել: Ժողովուրդը ստիպված իր տաւարները և շարժական կազմերը ժողովուրդով սկսում է քոչել... տները, մշակած, կանաչադարձ արտերը, դաշտերը թողնելով ուրիշին...

Ամենքին յայտնի է այսպիսի գաղթողներու պատկերը, ուստի աւելորդ եմ համարում հազար ու մի հառաչանքները: Անցնելով ամբողջ օրվայ ճանապարհ, դուք հասնում են Յրոնք գիւղը... և ահա, կառավարութիւնը մի նոր քաղաքականութեան հետեւելով, ուղարկում է կառավարչական ժողովի հայ անդամ պ. Նալբանդեանին, որ արգելէ զիրացոց շարունակելու ճանապարհը՝ խոստանալով գոհացնել նոցա պահանջները: Հայ անդամը համոզում է զիրացոց վերադառնալու, զանազան փաստերով ապացուցանելով վերադառնալու օգտաւէտութիւնը և գաղթելու հետևանքները, յայտնելով մի և նոյն ժամանակ որ կառավարութիւնը պատրաստ է իրանց պահանջները գոհացուցել կերպով կարգադրելու: Հայերը համոզվում են վերադառնալ... Բայց ինչ է ներկա-

Մենք մեր այդ միտքը աւելի մանրամասնաբար կը բացատրենք և գրանով կը վերջացնենք մեր խօսքը հետեւեալ համարումով...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, ամսին 13-ին, հայոց խումբը տալիս էր ուսու հեղինակ Ռիպինի Գրանի փոխարէն զո՞նք գրաման: Մի ժամանակ—վախճանական և մասամբ եօթնամասնական թականներին—

Յանուն նոցա առաջ տները, արտերը, շայրները, բոլորը աւելումը, բոլորը ոչնչացած...

Մրանց նման դաղթականներ շատ տեղեր տարածված են, մասաւանդ բազմաթիւ, որտեղ տարին մի քանի հայ անուշտ պիտի սպանուին չէնքնորդի: Նրանք ևս կառավարութեան զինամ են, բայց կրկին առաջիններուն պէս առանց ուշադրութեան են մնացել:

Այժմ Մշոյ դաշտի հայ գիւղերում ճանապարհորդը կը պատահի բարդ լամուկներով, կառավարութիւնը դոցա լեռներէ իջեցնելով դաշտը՝ հայերի մէջ բնակեցրել է: Մի անգամ մի գիւղում հանդիպելով մի քանի քուրդ կռօններու, հարցրեցի «Յորտեղացի էք»:—«Մասունցի ենք», պատասխանեցին:—«Ի՞նչու համար էք եկել»:—«Հայերի մէջ ապրելու»:—«Չէ որ զուք հող չունիք, բոլորը հայերին է», ասացին:—«Մենք էլ հայերի հողերի վրա կը բնակվինք, նրանց հողերի մի մասը մեզ կը հասնի»:—«Գուք ձեր կամքով եկա՞ք»:—«Այ, այս գարնան երբ Միւրթասարի՞ փաշան եկաւ մեր սարերը ման գալու, նա մեզ խրատեց, որ իջնենք դաշտ և հայերի հողերի վրա բնակուինք»:

Մուշից մէկ ժամ հեռաւորութեամբ գտնուում է Ջրիկ գիւղը, Մեղրագետի եզրերում, 70 տուն հայ, 15—20 տուն քուրդ բնակիչներով: Այս գիւղը նշանաւոր է իր արգաւանդ հողով, և գեղեցիկ այգեստանով: Այս գիւղին է մատակարարում Մշոյ քաղաքացոց և դաշտեցոց մեծ մասին բանջարեղէնները: Արտադրում է մեծ քանակութեամբ գետնանիւն, կաղամբ, ձմերուկ, սեխ, վարունակ, խաղող և այլն, որոնց լաւութեան և մեծութեան կողմէնք առաջինն է, և չեմ հանդիպած նոյն իսկ Ռուսաստանում, ուր այնքան առաջ է գնացել կազմարի և գեանախնձորի մշակութիւնը:

Այդ պատճառով մեծ արժէք ունին գիւղի վարելահողերը, արտ կայ 80—100 լիւրա արժողու-

մի այնպիսի անձնաւորութիւն է, որ շատ ուշատ էր պատահում ուսու հին, ճորտական կրթութիւն ստացած հասարակութեան մէջ: Չաւարտելով իր ուսումը ոչ մի տեղ, նա մտնում է քաղաքացիական ծառայութեան մէջ, բայց ստիպված է լինում թողնել նրան, յետոյ մտնում է գիւղական ծառայութեան մէջ, երկու անգամ պաշտօնադուրկ է լինում, երրորդ անգամ արդէն ստիպուած են բոլորովին հրաժարական տալ: Փորձում է մի քանի ուրիշ գործերով զբաղվել, բայց բոլորը անաջող ելք է ունենում: Այն ժամանակ նա սկսում է թախաւական կեանք վարել, այս քաղաքից այն քաղաքը չուել, այս տունավաճառից միւրը, գտնելու միամիտ մարդիկ, նրանց թղթախաղով կամ մի ուրիշ կերպով պոկելու: Մի այնպիսի ճանապարհորդութեան ժամանակ նա հանդիպում է իր հին ղեռ գիւնաղայից ընկեր Ալիսովի (պ. Վրոյր) կալուածքին: Sans ceremonie մտնում է նրա տունը և ստիպում է հիւրասիրել իրան: Ալիսով հարուստ մարդ է, գործի համար նա մի քանի օրով տունը պէտք է թողնի: Գնալով՝ նա տանը թողնում է 60 հազար րուբլի փող, որ նա այդ օր ստացել էր մի նոր կալուածք գնելու համար: Բազարով գիւղերով մտնում է Ալիսովի առանձնասենյակը և գողանում է այդ փողերը: Բազարովի հետ Ալիսովի մօտ եկած է լինում և նրա կալուածքները համար նոր կառավարիչ Վիլսի (պ. Արեւիկան): Վիլսին մանկութիւնից ծանօթ է լինում Ալիսովի կնոջ Օլգայի (տ. Չաբել) հետ և սիրում է եղև նրան: Գալով Ալիսովի մօտ, նա չէ իմանում, որ Ալիսով պատկած է նրա, Վիլսի, սիրած օրիորդի վրա: Հէնց Ալիսովի մօտ գալուն առաջին օրը Ալիսով ուղարկում է Վիլսիին Մոսկվա գործի համար: Վիլսիի մի ժամով ուշանում է ուղևորվելու Օլգայի հետ ժամագրութիւնից: Ուղեւորվելով Օլգայի սենյակում: Ժամագրութիւնից վերադառնալով նրան հանդիպում է Ալիսովի ծառան Յակոբը (պ. Միրաղեան): Ալիսով կէս ճանապարհին անհանգիստ լինելով տանից վերադառնում է, մտնելով իր սենյակը տեսնում է որ փողերը չը կան: Հրաւիրում են ոստիկանին (պ. Աւարեան): Կասկածը սկզբումը ընկնում է Բազարովի վրա, բայց Յակոբի վկայութիւնից յետոյ որ նա տեսել է Վիլսիին առանձնասենյակի մօտ, բանը փոխվում է, մասաւանդ որ առանձ-

թեամբ (800—1,000 ր.) մի որոշ արտը եթէ ուրիշ գիւղերում արժեանայ 10 ոսկի, այստեղ կը գնահատուի 50 ոսկի:

Բնակիչները մեծ մասը գրկված է հողերից, մի քանի հայ ընտանիքների կը պատկանի հողերի մեծ մասը, քուրդերի ձեռքում ևս անշնան հողեր կան: Այս գիւղացիք ուրիշ գիւղացիները պէս հողի արժէք չիմացողներէն չեն, իւրաքանչիւր տարի, գարնան սկզբներում, մեծ քանակութեամբ աղբ կը լցնեն արտերը, այն էլ փողով առնելով աղբը:

Այս գիւղի պարտո, արգաւանդ արտադրութիւնը ոչ սակաւ գրգռում է մասաւանդ տաճիկների նախանձը, որոնք և ոչ սակաւ ջանք կը դնեն զանազան միջոցներով նրանց վրա պարտք դիղելու, որ յաջիշտակեն վերջիններս վարելահողերը:

Տարիներ առաջ, մէկ մոտկանից քուրդ գալով սոյն Ջրիկ գիւղը՝ Մըլեի անունով մէկ հայի բօստանիչի է դառնում: Երեք տարուց յետոյ թողնելով երկու լամուկ և մէկ ամուսնացրած աղջիկ՝ մեռնում է: Նորա փեսան պահպանելով այդ երկու լամուկներին, վերջը զինուորական ծառայութեան կը տայ, որոնցից մէկը իւզաբաշտեան (հարկաւար պետի) աստիճանի է արժանանում: Սոյն իւզաբաշտեան, 1883 թվին գալով Մուշ, մի քանի տաճիկների և Ջրիկ բնակիչի նախանձով վառված ծեւրունիների դրոյմամբ, բողբոջալիք է ներկայացնում դատարանին, 10 մարդուց մէկ-մէկ արտ պահանջելով, փաստաբանելով թէ իմ հայրս այս գիւղում այդ արտերը վարել և սեպակահանել է, վկայ կանչելով Ջրիկից մի քանի քուրդ ծերունիներ: Հայերը ժամանակին ապացուցանում են, որ անիրաւութիւն է բոլորովին իւզաբաշտեան պահանջը: Գատարանը առանց վիճա տալու, գործը ուղարկեց Պոլսոյ գլխաւոր դատարանին: Սակայն իւզաբաշտեան Ալիսովի արդար շտապելով սուր է ջարդում դատարանում դատաւորի վրա, սպառնալիքներ կարգելով, թէ զուր ինչպէս ևս համարձակվում տեղութեան զինուորականին ընկճել տալ հայց և իր արի ոյժով առնում է իրան, հայերից պահանջելով արտերի կառավարութիւնից տրուած քոչանները: Հայերը մեթոսւմ են: Աճառտ աղան անձամբ բան-

նասնեակում գտնում են Վիլսի թախիկանակը, որ Բազարով ձգել էր այնտեղ: Վիլսի չէ պաշտպանվում, որովհետև նա այն ժամանակ պէտք էր բացատրել, թէ գիւղերից այդ ժամին ինչ էր անում նա տան այդ մասում, քանի որ նա պէտք է ճանապարհին լինէր, ի հարկէ, դրանով կը զննատք Օլգային: Նա խոստովանում է իր չը գործած մեղքը: Վերջին գործողութիւնն պատահում է հինգ տարուց յետոյ Միլերի ճանապարհի վրա, էտպի տան մօտ: Գնում է մի խումբ քաղաքացիների, շրջապատված զինուորներով: Աքտորեաների թուռնն են Վիլսի և Բազարով, որ դատաւարաբար է մի ուրիշ ոճրագործութեան համար: Բազարով ճանաչում է Վիլսիին, խիղճը չարչարում է նրան և նա կամեում է ազատել Վիլսիին: Այդ ժամանակ կառքով անցնելիս, իջևանում կանգնում է մի տիկին, տիկինը կամենում է որորմութիւնն անել աքտորեաներին: Վիլսիի նրան ճանաչում է, զա Օլգան է: Բազարով այլ ևս չը կարողանալով իրան պահել, խոստովանում է իր ու լինելը և իր մեղքը: Օլգան համաձայնութիւն է յայտնում Վիլսիին, կին դառնալ, քանի որ նրա ամուսինը ահա երկու տարի է որ մեռել է: Գրանով պիտան վերջանում է:

Ի հարկէ, Վիլսիի կազառով, իսկ Բազարով կը գնայ իր մեղքերը քաւելու: Պ. Աղաւանդ շատ լաւ էր Բազարովի դերում, մասաւանդ առաջին և երկրորդ գործողութիւններում: Գալով երկրորդ գործողութեան, գործողութիւնը կատարելու տեսարանին, պէտք է ասած, որ պ. Աղաւանդ սխալ էր հասկացել Բազարովին: Բազարով, այդ կրակից ու ջրից անցած Բազարով, միթէ այլքան կը չարչարվի, խիղճը այդքան կը տանջէ նրան, որ նա գործելու է և գործում է մի այնպիսի ոճրագործութիւն, որ նրա համար մի սովորական բան է: Լաւ էին տ. Չաբել, պ. Միրաղեան ծառայի, պ. Աւարեան իդոլիկի դերում, Պ. Արեւիկանին առաջին անգամն է որ տեսնում էինք փոքր շատէ պատասխանատու դերում: Պարտին ձայնը այնպէս է, որ կարծես բոլոր ժամանակ լայիս է, ձեռքերի հետ չը գիտէ ինչ անել, բայց թէ ինչպիսի դերասան դուրս կը դայ նրանից, այժմանից ոչինչ որոտակի չէ կարելի ասել:

Ներկայացման սկզբին տրվեցաւ «Աշխարհի տարկել և տալիս 10 հայերի, յայտնելով որ մինչև ջուշանները չը յանձնեն, չեն աղատուի: Հայերը անսնելով որ նոյն իսկ դատարանը ընկճուեցաւ իւզաբաշտե արից, մի ամիս բանտարկութիւնից յետոյ, արտերու քոչաններն կը յանձնեն Աճառտ աղին, ազատութիւն ստանալով (?)...

Երևակայեցեք, դատարանները ընկճվում են մի հարկաւար պետի արից: Աճառտ աղան սկսեց մշակել տալ նոյն արտերը, որոնց արիւնքը քաղաքացից չը թուցնենք և գրաւվեցաւ հողագործութեամբ: Անցեալ տարի կրկին մի բողբոջալիք ներկայացրեց դատարանին պահանջելով այլ ևս 20 արտ, որից 5 զլխաւոր արտ և երկու այգի պատկանում էր նոյն գիւղի հողատէր Մըլեի տղայոց, որոնց հօր մօտ բօստանչութեան պաշտօն էր վարում նոյն իւզաբաշտե հայրը:

Անցեալ գարնան մայիս ամսի վերջերն, Մշոյ հարուստ, մեծ աղբեցութիւն ունեցող, հոգևոր գլուխ, մուրեւանդ հայի Տայրը, շրջապատված մօտ 200 ձիււոր մահմետականներով մտնում է Ջրիկ գիւղի մտաքանանան կանաչած արտերը և բօստանները և հրամայում իր խմբին ջլիտ խաղալ... 15 արտ և 5 բօստան օտանալու անկողց յետոյ, հրամայում է և նախապահանք, որ ամբողջ նախըրը մտցնի արտերը արածացնելու: Հայի Տայրը չը բաւականանալով մէկ ամբողջ գիւղի յօսը ոչնչացնելով, իր կատաղի հրոսակով արշաւում է մօտաւոր Մախինայ հայ գիւղի արտերը և նոյնպէս փչացնում 20 արտ, յետոյ անցնում հետևեալ Արիւնջան հայ գիւղը նոյն վիճակին ներթափում, և վերջը անցնում Խոփի գիւղը և արտերը օտանալու անել տալիս: Բայց դեռ ևս չը յարգեաւ այնքան բարբարոսութեամբ, նա հրամայեց Մշոյ նախապահանքին ազատութեամբ արածացնել ամեն օր այդ չորս հայ գիւղերու արտերը, պատուէր տալով մի և նոյն ժամանակ զինաբար իր արգելով հային գետնի փուռ... Վայ այն հային, որ կը համարձակուէր մտտենալ մինչև անգամ արտին, եղևիլին գանակով վերջը չնչայն սպառ կը լինի... Եւ այդ սխտեմատական մի արշաւանք է...

Գիւղացիք զիմեցին տեղական կառավարութեան

կործանումն: Վերջինը, որ լաւ անցաւ չորսիւ պ. Տէր-Կալթեանի, որ, Վարդուհու և Յամուկի: Պ. Աւարեան որ կատարում էր իր դերը պ. Արեւիկանի տեղ, ինչպէս երևում էր ժամանակ չէր ունեցել ընտելանալ գերի հետ:

Բեժիսորական պակասութիւնները այս անգամ աւելի քիչ էին, քան անցեալ ներկայացումներին: Միայն էլի կային Բեմը չէր լուսաւորվում կամ միջնանում իր ժամանակին, պօլիցիականի գառկը դրագունի էր: Էտպալի սպայի մոնդիրը կարծես որ այդ սպան ոտով ուղեկցում է քաղաքացիներին:

Ժողովուրդը աւելի քիչ էր քան նախընթաց օրերը, այդ մասին կաշխատեց խօսել մի ուրիշ անգամ:

Հաստատ աղբիւրներից տեղեկանում ենք որ Կ. Պոլսից այլ ևս ուրիշ դերասաններ չեն գալու: Կօմիտեալը այդ մասին անցեալ օրը ստացել է վերջնական պատասխան:

Nemo

ՆԱՄԱԿ ԱԼԷԿՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Սեպտեմբերի 20-ին

Աշունը հասել է, մեր գիւղական հասարակութիւնները պատրաստվում են իրանց ծանր աշխատանքներից յետոյ դիմելու ձմեռով այս անգործ հանգստութեան: Աւերդը չի լինի այդ առիթով մի քանի խօսք ասելու մեր այս կողմի ժողովրդեան տնտեսական, և նիւթական դրութեան մասին:

Մեր քաղաքի շուրջը տարածվում են սևահող դաշտեր, որոնք գնալով շատ հեռու, հորիզոնի մօտ բարձրանում և մի բարդակաճ լեռնաշղթայ են ձևակերպում: Վերջինը Գաղաքը շրջապատած է չորս կողմից մանր ու խոշոր գիւղերով և այդ գիւղերում, ինչպէս և Ալեքսանդրապոլում, բնակիչները մեծամասնութեամբ, համարեա բոլորը հայեր են:

Ալեքսանդրապոլը, իր հայաբնակ շրջակայ գիւղերով միասին, ներկայացնում է մի այնպիսի կենտրոն, որտեղի ժողովուրդը, աղատ գտնվելով որ և է օտար աղբեցութիւնից, աւելի մաքուր և անխառն կերպով պահպանել է թէ իր լեզուն և թէ իր սովորութիւնները: Պողաբեր սևահող դաշտե-

պաշտպանութեանը, հեռապրցին նաև Բ. Գրան և նահանգապետին այդ երեւանագործութեան մասին... Իսկ Հաշի Տայրը չէր հեռանում գաղտնից, օրերով նստում էր շրջապատված իր ֆախիներով նոյն գիւղերի սահմանալիքներում և հրամայում իր ներկայութեամբ արածացնել արտերը: Կառավարութեան պաշտօնանները խմբիցան դաշտ քննութեան, դոցա գործը եղաւ լրացնել հայի Տայրի երեւանագործութեան մնացորդը, մնացած արտերն ևս իրանց ձիւրուս ուտեցնելով: Իսկ խեղճ գիւղացիք հեռուցից դիտելով կը սպասէին, որ պաշտօնանները կը հրամայեն հաշի Տայրին հեռանալու և հեռապրցնելու նախըրը իր օրը յայտ Մի խեղճ հայ համարձակուել էր նոյն մուրեւանդ կրօնականին յայտնել իր սրտի կակիճը թէ չիմալ օր դու զիմ ճիճեբուս ուրիշը կտրիր, Աստուած հմա էլ քու ուրիշը կտրի, վստահ լինելով դառաւապետի և այլ պաշտօնանների ներկայութիւնից, որ կը պաշտպանեն իրան, իսկ կրօնականը յանդուգն հայի այդ անտանելի յանդիմանութիւնից կատարելով, փրկելով կոչում է իր ֆախիներուն, և գաւառապետի ներկայութեամբ հրամայում, որ նոյն գեավուրին սրախողտող անեն, որոնք իսկոյն մերկայցնելով իրանց սրերը յարձակվում են հայի վրա: Իսկ դառաւապետի պաշտպանութիւնը միայն սա է լինում, որ ակնարկով յայտնում է խոյս տալու: Մշեցին փախուստով ազատում է իր կեանքը այդ հրօսակից...

Հայ գիւղացին ստիպվում է թողնել հողը, այն նա ստիպվում է թողնել: Հողերը անցնում են ոչ միայն թուրքերին, այլ և լեռներին էլ տիրապետող քրիզերի ձեռքը: Այդ բանը կատարվում է թէ յայտնի և թէ գաղտնի կերպով.— և սխտեմատաբար... Մենք կը շարունակենք հաղորդել լոկ փաստեր, օրինակներ, սովորական իրողութիւններ մի պարզ գաղափար տալու, թէ ինչ հողային քաղաքականութիւն է տիրապետում այժմ թիւրքա-Հայաստանում, և թէ առհասարակ ինչ միջոցներ են գործ դրվում,—որոնցից մի երկուսը միայն յիշեցնելը.—հայերին հողից զրկելու համար...

Հ. Գ.

ըր վաղ ժամանակից ստիպել են այստեղի բնակիչներին երկրագործութեամբ պարսպել և այժմ այս գաւառում գլխաւոր և տիրապետող զբաղմունքն է երկրագործութիւնը: Որքան էլ որ այդ պարսպումները ինքն ըստ ինքեան շահաւէտ, կարեւոր և անզիւ է, սակայն մեր գաւառի երկրագործը, հողի սակաւութեան պատճառով մեծ ազդեցութեան և տնտեսական անկումի մէջ է գըտնվում: Աղքատութիւնը հետզհետէ ստիպում է մեր գիւղացուն արհամարհել իր պարսպումները և մտ միշտ անբաւականութիւն է դրում դէպի երկրագործութիւնը, որի չարարանքը և նեղութիւնը տասնամյակի առաւել է նրա տուած օգուտից: Այդ բանը մի մեծ չարիք կարող է առաջացնել մեր գիւղական կեանքի համար:

Հողի պակասութիւնը այնքան շատ զգալի է մեր գիւղացուի, որ ամեն տարի, ինչպէս և այս տարի, գարնան սկզբին, զանազան հողային վիճաբանութեան պատճառով, գիւղացիները իրար դուրս են կոտորում...

Աղքատութիւնը և տնտեսական նեղ դրութիւնը ստիպում են մեր գիւղացի երիտասարդներին, թաւալ ոյժերին դիմել զանազան քաղաքներ և մըշակութիւն անել: Այդտեղից է առաջ գալիս քաղաքներում մայրով մեր գիւղական պրօլետարիատը... Այժմ քաղաքային վաճառականները տնտեսաբար մշակները Այդ մշակութիւնը թէև նրանց տալիս է քիչ-շատ նիւթական օգուտ, սակայն յաճախ և շատ ծանր է նստում ընդհանրութեան վրա, և դառնում է մեր գիւղական դասակարգի տնտեսական քայքայման մի նոր պատճառը: Դժուար է մտանալ այնպիսի ցաւալի դէպքեր, որոնց էտլութիւնը բացատրում է հետեւեալ անցքը: մի երիտասարդ գիւղացի մտնում է այստեղի վաճառականներից մէկի մօտ ծառայութեան, հէնց նոյն օրվայ հետեւեալ առաւօտ խեղճ երիտասարդին մեռած գտնում են յիշեալ վաճառականի ներսնատան մէջ: Սպանութեան պատճառը ասում են յայտնի չէ...

Հողի սակաւութեան խնդիրը մի կատարեալ երկպառակութեան խնձոր է մեր գիւղացիներին մէջ: Հողի համար գիւղացին ստիպված է միշտ կուռել իր հարեանի հետ, ստիպված է զանազան որոգայթներ լարել նրա դէմ, և սրանով կարծում է նրանց մէջ համբարշտութեան կապը: Նընչանում է նրանց միջից ընկերական ոգին, համայնական սկզբունքները...

Ի հարկէ, այսպիսի տնտեսական կրիզիսի ժամանակ, երբ մեր գիւղացու ընտանիքին սպառնում է սովամահ լինելու վտանգը, ոչ ոք չէ կարող մտածել նրա մտաւոր զարգացման մասին: Եւ այդ բանում ոչինչ յանցանք չունի գիւղացին: Նա աղքատ է, նա ուսուելու հաց չունի և ուրեմն շատ հասկանալի է, եթէ նա չէ կարող, կամ նոյն իսկ չէ ուղում ուսումնարան պահել, վարժապետի ուսուցում մտնանալ այնպիսի ուսումնարանի համար, որը դրական զէնք գիւղի նոր սերնդի ձեռքը չէ տալիս կապելու հողի հետ և նիւթական բարօրութեան հասնելու: Մեզ ուրիշ տեսակ ուսումնարաններ են պէտք: Իսկ ներկայումս գիւղական վարժապետը պէտք է մտանայ իր շահերը, ակնկալութիւն չը պէտք է ունենայ գիւղացուց, հակառակ դէպքում, այժմեան հանգամանքներում նա ստիպված կը լինի չարչիւթի անել, ստիպված կը լինի վախճառուների նման ճնշել, հարստանալ գիւղացուն: Բայց այդ կարելի է պահանջել վարժապետներից... Իսկ երբ այդպիսի յարաբերութիւններ սկսեցին վարժապետի և գիւղացիների մէջ, առաջինը կորցնում է իր բարոյական նշանակութիւնը, այնուհետև ուսուցիչը դառնում է ոչ թէ մի կրթող և զատարար կողմ անձնատրութիւն, այլ մի չարչի, մի այնպիսի հարստանալից տիրացու, որոնք իրանց չնչին հարստանալի համար մինչև հիմա էլ շատ տեղ ամեն տեսակ խաբէութիւններ են անում գիւղացու հետ: Ահա այդպիսի նեղ դրութեան մէջ մեր գիւղացիք դիմաւորում են ձմեռվան, և այդպիսի սպառնալից հետեւանքով պատում են տարիները մեր խեղճ գիւղացիների համար:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՇՈՒՆԱՎԵՐԻՑ մեզ գրում են: «Մեր կողմերում այդքազը արդէն սկսվել է: Այս տարի ամենքը շերտ են հաւաքում, բայց թէ ինչ հետեւանք կունենայ չիւայի գնի բարձրանալը... այդ այժմից արդէն կարելի է գուշակել: Գինին գնի մէջ կընկնի և թ ու զին (10 գրվանք) տաս կոպէկով

էլ պակաս կը ծախվի, ինչպէս և եղաւ անցեալ տարի, թէև գինիները լաւ էին»:

Ընթերցողները յիշում են, որ այս ամառը տպված էր «Մշակի» մէջ մի տեղեկութիւն թիւրքաց Հայաստանի Հին-Բայազէտ քաղաքից իր կընող հետ եկած մի ուսուցչի մասին, որ զանգուարվում էր թէ ծառայած լինելով յիշեալ քաղաքի Միացեալ ընկերութեան պատկանող դպրոցում, այդ ընկերութիւնը իրան լիովին հատուցած էր ուսուցիչը: Այժմ ստացանք կ. Պօլսի Միացեալ ընկերութեան վարչութիւնից մի երկար նամակ, որով վարչութիւնը մանրամասնաբար բացատրում է մեզ գործի էութիւնը և պարզ ցոյց է տալիս ուսուցչի արած զբարոյութիւնները ընկերութեան դէմ: Այդ նամակից պարզ երևում է որ Միացեալ ընկերութիւնը մի կօպէլ անգամ պարտ չէ գանգաւորող ուսուցչին: Բայց որպէս զի յիշեալ ուսուցիչը իր ամուսնու հետ դարձեալ կարողանայ վերադառնալ կ. Պօլսի, Միացեալ ընկերութիւնը, թէև իրան պարտաւոր ամենին չէ ձանաչում այդ պարտին օգնելու, այնու ամենայնուպէս ուղարկել է մեր անուշով պ. Վահրամ Մովսիսեանի ձեռքով մի գումար, որպէս զի մենք յիշեալ ուսուցչի ձանաչարձանաբար մինչև կ. Պօլսի վճարները: Բայց մենք, իմանալով թէ ուսուցչին քանի մի չարաթ առաջ թիֆլիսում ապրող թիւրքացի մի քանի հայերից օգնութիւն ստանալով, արդէն ուղղորդել է իր կնոջ հետ դէպի կ. Պօլսի, անմիջապէս իմաց տուելիք պ. Վահրամ Մովսիսեանին, որ մեր անուշով կ. Պօլսից եկած փողը այլ ևս հարկ չը կայ որ մեզ յանձնի, քանի որ ուսուցչի, որին ձանաչարձանաբար պիտի վճարէինք այդ փողով, ձեռք բերած է արդէն նիւթական քիչ թէ շատ միջոցներ և ուղեորված է արդէն դէպի կ. Պօլսի:

ԿԻՇԻՆՎԱԻՑ գրում են Մովսիսի լրագրիչներին, որ այնտեղ կայացաւ բժիշկների ժողով՝ խօսելու յի հարցի ընտելութեան համար: Ժողովը զննեց մի քանիսը այն միջոցներից, որոնք կը գործարկվեն խօսելույի առաջը առնելու համար:

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԻՆՍԻՑ մեզ գրում են, որ այնտեղի երկսեռ դպրոցները թէև բացվեցան, բայց էլի փակվեցան մի քանի անսպասելի պատճառներով: Յոյս կայ, որ այդ դժուարացող պատճառները շուտով կանցնեն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՆԲՄԱՆԱԿԱՆ ՔԱՂԱԲԱՍ - ՏՆՏԵՍՆԵՐԻ ԺՈՂՈՎ

Անցեալ ամսի սկզբներում Ֆրանկֆորտի մէջ տեղի ունեցաւ գերմանական քաղաքատնտեսների ժողովը պրօֆէսոր Նասսիի նախագահութեամբ: Տնտեսագետների ժողովը չունէր արտաքին մեծ փայլ, իր արտաքին ցոյցերի և շքեղութիւնների կողմից այդ ժողովը ոչինչ նմանութիւն չունէր Բերլինի «բնագէտների» ժողովներին: Սակայն բովանդակութեան կողմից ժողովը պարսպումները իտրին ուշադրութեան արժանի են: Ժողովը չօգտից ամենաշահական խնդիրներից մի քանիսը: Հողային նշանաւոր հարցը, որը եւրոպական երկրների ամենադժուար լուծելի հարցերից մէկն է ներկայումս, այդ ժողովի առանձին ուշադրութեան նիւթ դարձաւ:

Տնտեսական կողմից Գերմանիան ներկայումս բաւական դժուար կայգութեան մէջ է Մինչդեռ մի կողմից գործարանական արդիւնաբերութիւնը աճում է, միւս կողմից կարիք է դրացվում ամենահարձակաւ պիտոյքների մէջ: Գործարանական և գիւղատնտեսական արդիւնաբերութեան մէջ համեմատութիւն չը կայ համարեալ: Այդ երևոյթի պատճառները շատ են...

Գերմանիան իր սեփական արդիւնաբերութեամբ կարող է բաւականութիւն տալ ազգայնականութեան, բայց դրա համար հարկաւոր է աւելի ուշադրութիւն դարձնել զիւղական ազգայնականութեան դարգացմանը և աճելուն, որտեղ համար ամենից ազտը է հանդէս բերել հողային մեծ սեփականութիւնների տեղ, մանր և միջակ հողատիրութիւն:

Եւ այդ մտքերի վրա երկար կանգ առաւ որքան տեսողանների ժողովը: Այդ հարցի ընտելութեան վրա առանձնապէս ուշք դարձրեցին Շօլլէրը, Նասսի և Կօնրադ պրօֆէսորները: Անցնելով հո-

ղային հարցի այդ նշանաւոր կողմի ընտելութեանը ժողովը կանգ առաւ զլիաւորապէս Շօլլէրի մտքերի վրա: Շատերը ժողովականներից այն կարծիքի էին, որ կառավարութիւնը պէտք է գէթ 1886 թվի ապրիլի 28-ի օրէնքը գործարկի ամբողջ պետութեան մէջ, և ոչ թէ միայն Պօլսի նստում և Արեւմտեան Պրուսիայում (այն էլ յայտնի տեղեկացիւցով) այսինքն, գնել մեծ կալուածատէրերից մեծ հողերը և մաս-մաս տալ գիւղացիներին: Այդ մտքի գլխաւոր նպատակն է մեծ հողատիրութեան փոխարէն առաջ բերել մանր կալուածատէրեր:

Ժողովի մի ուրիշ մասը պնդում էր, որ պէտք է բոլոր հողերը դարձնել պետութեան սեփականութիւն, և երկրագործներին ընդունել իբրև պետութեան կապալաւորներ: Ժողովականների մի ուրիշ մասը պաշտպանում էր աշխատանքի և կապիտալի գործադրութեան կատարեալ ազատութեան սկզբունքը: Խօսելով այդ բոլոր սկզբունքների մասին Շօլլէրը ասեց. «Պետութիւնը կարող է իր վրա առնել մեծ հողեր գնելու ծանր և պատասխանատու գործը, որպէս զի կազմի դրանցից հողային համայնքներ, մանր հողային բաժանմունքներ, որոնք կը տրվեն հողագործներին յայտնի ժամանակով... այնպիսով կը կազմվի սեփականութեան և կապալի մէջ տեղը բնաւ մի դրութիւն... Եթէ պետութիւնը քիչ-քիչ կապալագործի մի քանի միլիոն գիւղացիներին հոգով... այդ էլ կը լինի մի մեծ գործ: Այդ միտքը համարեալ ընդհանուր ընդունելութիւն գտաւ ժողովի կողմից:

Ժողովի պարագմունքի միւս նիւթերից նշանաւորը կարելի է համարել այն հարցը, որը վերաբերում էր Գերմանիայի մեծ քաղաքներում բանտերի համար ընակարաններ շինելու խնդրին: Հարցի ընտելութեան սկզբում այն միտքը յայտնվեցաւ, որ բանտերի համար ընակարաններ շինելու գործը պէտք է յանձն առնեն, առանձին այդ նպատակի համար կազմված ընկերութիւնները, և մասամբ էլ համայնքները և պետութիւնը: Պետութիւնը ունենալով իր ձեռքի տակ հազարի տարածութիւններ, հեշտութեամբ կարող է այդ բանն անել, նա նոյնը կարող է անել և իր աստիճանաւորների համար, փոխանակ նրանց առանձին փողեր յատկացնելով ընակարանների համար:

Շօլլէրի կարծիքով այդ բանը միանգամայն անյարմար է համայնքների և պետութեան համար. նրա կարծիքով այդ բանը յաջողութեամբ կարող են առաջ աննել ընկերութիւնները: Շօլլէրը առաջարկում է հինգը-այդպիսի ընկերութիւններ, սակայն որոնք իրաւունք չունենային աներ շինել, այլ միայն աներ գնել և վարձով տալ բանտերներին: Ներկայումս բանտերը աստիճանաւոր կերպով տանջվում են զանազան հարստահարողներից: Հիմնվելով ընկերութիւնների գլխաւոր նպատակներից մէկն էլ պէտք լինի այդ հարստահարող «միջոցներին» հետաքննել ասպարիզից: Այդօրինակ ընկերութիւններ հաստատելու համար ժողովականներից շատերը առաջարկում են ընդհանուր պրօպագանդա անել երկրի զանազան կողմերում: Համայնքներին յայտնելով Շօլլէրի մտքին, ժողովը մի և նոյն ժամանակ համակրութիւն յայտնեց և այն մտքին, որը պաշտպանում է այն սկզբունքը, թէ պէտք է անպատճառ լինեն և ընակարանների կառուցանող ընկերութիւններ, որպէս զի պահանջի համեմատ էլ՝ առաջարկութիւն լինի, և ընակարանների գներն էլ շատ չը բարձրանան: Ժողովը կանգ առաւ և ընակարանների գների վրա, որի ժամանակ զանազան դիտողութիւններ եղան պետական և հասարակական գանդանազանի կողմից: Այդ հարցի մասին օգուտը պաշտպանելով խօսեց ժողովը անդամ Միկէլ, որը պաշտպանելով համայնական սկզբունքը, բանտերի պաշտպանութեան գաղափարը, հրաւեր կարգաց ընդհանուր ոյժով ձեռք առնելու անտեսական մեծ խնդրի լուծումը: Այդ ճառը ընդհանուր համակրութեամբ ընդունվեցաւ: Ժողովը փակվեց սեպտեմբերի 13-ին:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐՐՈՒԳ, 14 հոկտեմբերի: Հրատարակվեցաւ հետեւեալ Բարձրագոյն հրամանը զօրքին և նաւատորմին ուղղված: «Այսօր տեղի ունեցաւ Պետերբուրգում 1877 և 1878 թվի Թիւրքիայի հետ ունեցած պատերազմի արձանի հանդիսաւոր բացումը: Թող լինի այդ արձանը զօրքի անձնութեան ու քաջագործութեան մշտական յիշատակը, որոնք Աստուծո օգնութեամբ ուսաց զբոյակին ու ուսաց անուշորը նոր փառք բերեցին: Այս հանդիսաւոր օրը դառնում եմ դէպքի ձեզ իմ կողմից զօրքի և քաջագործ նաւատորմի սպարապետներ, ծովապետներ, սպաներ, զինուորներ և նաւատիրներ, նրա համար, որ ասեմ ձեզ, որ ծս հաւատում եմ ձեր անսասան հաւատարմութեանը, փառաւորում եմ ձեր սքանչելի քաջութիւններով ամբողջ Ռուսաստանի հետ միասին, և շնորհակալութեամբ լցված սրտով յիշում եմ գահին և հայրենիքին մատուցած ձեր մեծ ծառայութիւնները: Այդ յիշողութիւնները

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիեննայում խօսելույի մի դէպք եղաւ հոկտեմբերի 6-ին:

—«Times» լրագրին Բերլինից գրում են. «Այստեղի բոքսան աւելի ու աւելի կասկածով է վերաբերվում դէպի ուսուց թիթերը: Այդ բոլորի պատճառները գլխաւորապէս համարվում է Արեւելեան հարցի այժման դրութիւնը»:

—Պետերբուրգից գրում են Բերլինի լրագրիչներին, որ իբրև թէ Ռուսաստանի մայրաքաղաքում հանդիւսւմ են, որ Բերլինում մեծ պաշտպանութիւն են ցոյց տալիս իշխան Ալեքսանդրին:

—Բօլզարիայից եկած տեղեկութիւններից երևում է, որ Կարապիլովի բռնած այժմեան դիրքը և ունեցած անհամաձայնութիւնները խնամակալութեան հետ՝ լաւ տպաւորութիւն չեն թողել: Կարապիլովին ուղում են հետաքննել իր պաշտօնից:

—Ունգարական պատգամաւորների ժողովի հոկտեմբերի 2-ի նստում, Տիսսա իրան արած հարցմունքին պատասխանեց, որ եթէ ժողովը ցանկանում է, ինքը ժամանակով կը խօսի գներեալ կառուարսի Բօլզարիայում կատարած գործերի մասին:

—«Հաւասի» գործակալութեանը հարցողում են, որ Հայաստանում սկզբեցան նոր խառնակութիւններ: Չէ՞ յիշուում տեղի ունեցան կռիւներ հայ ժողովրդի և թիւրք զինուորների մէջ: Շատերը վերաւորվեցան և սպանվեցան:

—Խաւիլայի մի քանի նաւահանգստներում կառավարութեան կարգադրութեամբ, պատերազմական նաւերը կազմ և պատրաստ են՝ առաջին հրամանից յետոյ ծովը դուրս գալու...:

—Փարիզի բժիշկ-խիւրդների ժողովը բացվեցաւ հոկտեմբերի 13-ին. ներկայ են բժիշկներ և Բելգիայից, Շվեյցարիայից ու Խաւիլայից:

—Նիւ-Եօրքից հարցողում են, որ «Ալխատանքի Ասպետներ» ընկերութեան անդամների թիւը մի միլիոնի է հասնում: Ընկերութիւնը ունի նիւթական աճազին ոյժ:

—Սարապինի փոթորիկները Ամերիկայում մեծ վնասներ են տալիս: Սաստիկ հեղեղներից էլ մեծ վնասներ են գալիս. մի քանի քաղաքներ մեծ մասամբ ակերված են:

ԽՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Շչեղրինի (Սալտիկովի) վերջին գրուածները առանձին գրքով տպագրվեցան Պետերբուրգում:

Անգլիական դիվլոմատներից մէկին հարցրին, թէ արդեօք պատերազմ կը լինի թէ ոչ. դիվլոմատը պատասխանեց. «չառ գիտեար. որովհետև Աւստրիան չունի զօրք, Անգլիան՝ ազգու միւստրութիւն, Թիւրքիան՝ քաղաքական ոյժ, Ֆրանսիան՝ կայսր, և Բիւսմարկը՝ ցանկութիւն»:

Ընդհանուր հայրենիք երևում է, որ Եւրօպայում խեղաքարներ թիւը կէս միլիոնից աւելի է:

1887 թվին, ապրիլին, վենցիլայում բացվելու է ազգային գեղարուեստական ցուցահանդէս:

Երկրագնախ վրա եղած բոլոր գերմանացիների թիւը հասնում է 70 միլիոնի, որից միայն 43 միլիոնն է ընակվում Գերմանիայում, 15 1/2 միլիոն Աւստրո-Ունգարիայում, 2 միլիոն Շվեյցարիայում, 1 1/2 միլիոն Ռուսաստանում, 7 միլիոնը աւելի Ամերիկայում, և 3 1/2 միլիոն էլ Ասիայում, Աֆրիկայում և Աւստրալիայում:

Փարիզից գրում են, որ օրերումս այնտեղ սկսվեցաւ վաճառվել ուսուց յայտնի գրքը Շչեղրինի նշանաւոր «За рубежом» գրուածքի ֆրանսերէն թարգմանութիւնը «Berlin et Paris—Voyage satirique à travers l'Europe» վերնագրով (Բերլին—Փարիզ, ծաղրական ճանապարհորդութիւն Եւրօպայի միջով):

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐՐՈՒԳ, 14 հոկտեմբերի: Հրատարակվեցաւ հետեւեալ Բարձրագոյն հրամանը զօրքին և նաւատորմին ուղղված: «Այսօր տեղի ունեցաւ Պետերբուրգում 1877 և 1878 թվի Թիւրքիայի հետ ունեցած պատերազմի արձանի հանդիսաւոր բացումը: Թող լինի այդ արձանը զօրքի անձնութեան ու քաջագործութեան մշտական յիշատակը, որոնք Աստուծո օգնութեամբ ուսաց զբոյակին ու ուսաց անուշորը նոր փառք բերեցին: Այս հանդիսաւոր օրը դառնում եմ դէպքի ձեզ իմ կողմից զօրքի և քաջագործ նաւատորմի սպարապետներ, ծովապետներ, սպաներ, զինուորներ և նաւատիրներ, նրա համար, որ ասեմ ձեզ, որ ծս հաւատում եմ ձեր անսասան հաւատարմութեանը, փառաւորում եմ ձեր սքանչելի քաջութիւններով ամբողջ Ռուսաստանի հետ միասին, և շնորհակալութեամբ լցված սրտով յիշում եմ գահին և հայրենիքին մատուցած ձեր մեծ ծառայութիւնները: Այդ յիշողութիւնները

Թող զբաղական լինեն իմ և ամբողջ ուսու ժողովրդեան այն հաստատ համոզումներն, որ այն բոլոր փորձություններն ժամանակ, որ նախախնամությունը կուղարկի Ռուսաստանին ապագայում, նրա զորքը և նաևատորմը միշտ կը մնան զինուորական քաջագործությունների բարձրության և անթափանց փառքի մէջ, որոնք ձեռք են բերված մեր նախահայրերի ձեռքով, և որոնք մեր առաջ պաշտպանված և մեծարված են: Մեծ իշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչ իր ամուսնու հետ, հոկտեմբերի 12-ին, կէտղիներն ուղևորվեցաւ արտասահման: Կիրակի օր, էրմիտաժում տրված ճաշի վերջում, որին ներկայ էին անցեալ պատերազմին մասնակցած զինեղաները և սպանները, թագաւոր կայսրը խմբից ներկայ եղողներին կենացը և շնորհակալութիւն յայտնեց նրանց ծառայութեան համար: Դրանից յետոյ Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայիւի հետեւեալ տասուր առաջարկեց կայսրին կենացը «Առաջարկում եմ Նոր կենացը, որը աւելի քան ութ տարի, առաջնորդեց այն զորքին, որը մի անդիմազրելի պատեն էր Գոնայի զորախնդի ձախակողմի համար, մի այնպիսի պատեն է, որից ջանջարկում էին երկու անգամ աւելի ուժեղ թշնամու բոլոր ջանքերը, Բուչուկի զորաբանին առաջնորդի կենացը (ուրա): Այդ տաստին կայսրը պատասխանեց երկու զինեղան-ֆելդմարշալների կենացը առաջարկող տաստով:

ԺՈՒՐԺԵՎՈ, 14 հոկտեմբերի: Ժողովրդի և զորքի մէջ աւելանում է դժգոհութիւն դէպի Բոլշակովսկի կառավարութիւնը: Շուկայի, Սիլիայի և մի քանի ուրիշ քաղաքների բերդապահ զինեղան թշնամաբար են վերաբերվում դէպի կառավարութիւնը: Լուսաւանկայում բացվել է մի զինուորական դաւադրութիւն, որը ճնշել կարելի եղաւ միայն Վլադիմիր կանչված զորքի աջակցութեամբ: Խնամակալները զգալով իրանց այդպիսի գրութեան անհաստատ լինելը, աշխատում են տարածել ժողովրդի մէջ լուրեր, որ իբրև թէ իրանց աջակցել է համաձայնութիւն կայացնել Ռուսաստանի հետ, մինչդեռ համաձայնութիւն ոչ միայն չէ եղել, այլ մինչև իսկ հաջիւ թէ կարողանայ լինել ներկայ հանդամանքների պատճառով: Գնեղակ կառուցարար անձամբ և ուսուցիչ հրապարտներ միջոցով կրկին անգամ յայտնեց, որ ազգային մեծ ժողովը ապօրինի է, և որ բոլոր վճիռները, որոնք կընդունվեն ժողովի կողմից, օրէնքի ոյժ չեն կարող ունենալ:

Վ. Ա. Գ. Ի. Վ. ՍՈՍՈՎ, 14 հոկտեմբերի: Չինաստանի և Ռուսաստանի պետական սահմանները Հարաւորաստերի մտերմում որոշող յանձնաժողովը վերջացրեց իր աշխատանքները: Սահմանը որոշած է և նշանակված քարտայ սիւներով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 հոկտեմբերի: «Правит. Вѣстникъ» լրագիրը հաղորդում է, որ Բոլշակովսկի շրջանում ունեցող անիշխանութեան շէնորհիւ, մեր հրապարտները, զրկված են այդ երկրում ապրող ուսու հպատակների օրինական շահերը պաշտպանելու հնարաւորութիւնից: Վարչային գնեղակ կառուցարարի գնալուց յետոյ ամենանախնդին պատրաստեցում ուսուցիչ հպատակներին բանտարկութեան դէպքեր եղան: Գործերի մի այդպիսի գրութիւն ի նկատի առնելով, այս օրերս Վարնա են ուղարկված «Забияка» և «Помыть Меркьюри» շոգենաւոր:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 հոկտեմբերի: Թագաւոր կայսրը, ուշադրութեան առնելով այն աշխատանքները և զրկանքները, որ կրել են 1885 թրւին կովկասեան պահեստի զորքերի Մուրզաբի և Սերապի բաժինները տեղափոխութիւնների և գործողութիւնների ժամանակ Անդրկասպեան

շրջանում և ի նկատի առնելով Ասիայի զորքի մինչև Սէրով և Սէրասի հեռագրաթիւ անցկացնելու գործին մասնակցողներին, Բարձրագոյն հրամայել բարեհաճեց՝ այդ ժամանակամիջոցը համարել որպէս պատերազմական արշաւանք:

ԺՈՒՐԺԵՎՈ, 15 հոկտեմբերի: Այսօր նշանակված ազգային մեծ ժողովի բացումը յետաձգված է մի քանի օրով: Շատ պատգամաւորներ վճռեցին չը մասնակցել նիստերին: Բ. Գուրը բողոքում է ժողովին ռուսիական պատգամաւորների մասնակցութեան դէմ: Ասում են, որ սէրասի ժամանակ առանձին պատգամաւորութիւն կայցելէ եւրոպական պաշտները, նրանց կարծիքը իմանալու համար բոլշակովսկի գահի կանդիդատի վերաբերութեամբ:

ՆԻՇ, 15 հոկտեմբերի: Համաձայնութիւն կայացաւ Բոլշակովսկի և Սերբիայի մէջ զիւլոմատիական յարաբերութիւնները վերականգնելու մասին: Գոկտոր Սորանկի բոլշակովսկի զիւլոմատիական գործակալաւոր է նշանակված Բէլգրադում:

ԼՈՆԴՈՆ, 15 հոկտեմբերի, «Times» լրագիրը վճռողաբար խօսում է Ֆրանսիայի պահանջների դէմ եղկատական խնդրում և յայտնում է որ Անգլիան ինքն պէտք է վճիռ այն հարցը, թէ Բրը պէտք է վերջացած համարել անգլիական միսիան եզրկոտում:

ՄԱՆՅՈՆ, 15 հոկտեմբերի, Շրջակայքում մի քանի, ըստ երևոյթին, խօրեղային հիւանդութիւնների դէպքեր կային: Նախագագուցութեան միջոցներ են առնված:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Հոկտեմբերի 15-ին

Ռուսաց 1 ռուբլ Լճոնի վրա արժէ	22 3/32 պէնս.
— — — — —	195 պֆ.
— — — — —	242 1/2 տան.
Ռսիի — — — — —	8 ր. 60 կ.
Մաքաւի կուպոններ	167 > 1/4 >
Արժամք — — — — —	1 > 33 >
Բորսային դիվիդենդներ	4 1/4 և 6 1/2 >
Պետակ. բանկ. 5 1/2 տոսն 1-ին շրջանի	100 > 25 >
— — — — —	2-րդ — 100 > 25 >
— — — — —	3-րդ — 99 > 87 >
— — — — —	4-րդ — 99 > 62 >
— — — — —	5-րդ — 99 > 62 >
Արևելեան 5 1/2 փոխառութ. 1-ին շրջ.	99 > 50 >
— — — — —	2-րդ — 99 > 12 >
— — — — —	3-րդ — 99 > 12 >
Ներքին 5 1/2 առաջին փոխառութ.	240 > — >
— — — — —	222 > 50 >
5 1/2 1/2 րէնտա	105 > — >
Ուկրայն րէնտա	186 > 50 >
Նոր կոնսոլիդաց ժողովարկութիւն.	159 > 50 >
5 1/2 1/2 գրաւական թղթեր կալուած.	— — — — —
— — — — —	161 > 62 >
5 1/2 1/2 գրաւական թղթեր խրոստի	— — — — —
— — — — —	95 > 75 >
6 1/2 1/2 գրաւակ. թղ. խրոստի կալ. բան.	101 > 50 >
— — — — —	100 > 50 >
— — — — —	101 > — >
— — — — —	102 > — >
— — — — —	103 > — >
— — — — —	100 > — >
— — — — —	101 > — >
— — — — —	101 > — >
— — — — —	27 և 43 տ. 97 > — >
— — — — —	18 և 43 տ. 97 > — >
Վ. օլժակ-կամակի բանկի ակցիաները	575 > — >
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	263 > 50 >
Ռիբինսկ-Վ. օլժակ ընկ.	96 > 75 >
Ս. Պետերբուրգի քաղաքային օրին-գացիաներ.	94 > 25 >
Մոսկույի քաղաք. օրինգացիաներ.	95 > 75 >
Օդէսայի — — — — —	94 > — >
Նոր երկաթուղային ընտա	98 > 75 >
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրլ.	— > — >
Պետական բանկի 6-րդ հրատարակութեան տոմսերը	99 50 >

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր-հրատարակող Գ. Բ. Գ. Ս. ԱՐՄԵՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Հայուհեաց բարեգործական ընկերութեան վարչութիւնը խնարհաբար խնդրում է Հայ հասարակութիւնից շնորհ բերել կիւրակի, հոկտեմբերի 19-ին, ս. Նշան կեկեղցին՝ ս. պատարագից յետոյ ներկայ լինելու այդ եկեղեցու գաւթում կառուցած ուսումնարանի օրհնութեան հանդիսին: Ս. պատարագը սկսվելու է առաւօտեան 10 ժամին:

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Չորեքշաբթի, հոկտեմբերի 29-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMENIE) շոգենաւոր, նաւապետ ՇԵԼՏ (SCHEULT) զուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրգու, Սամսոն, Գ. Պոլիս և Մարսէլ: Տեղեկութիւններն մասին պէտք է շինել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիօնի և Թիֆլիսում պ. Բէնօնի, նախկին Արժ. րուների գալլերէում, № 103.

Տոհմական պատուաւոր քաղաքացի ԹԵՒԱՆ և իւր ամուսին ՍՈՓԻԱ փանեան ԱՐԱՍԻԱՆԵԱՆՆԵՐԸ, ցաւօք արտի յայտնելով իրանց ամենասիրելի դուստր ՇՈՒՇԱՆԻԿ ԹԵՒԱՆԵԱՆ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅԻ մահը, խնդրում են իրանց ազգականներին և ծանօթներին շնորհ բերել հանգուցեալի յուղարկաւորութեան, որը տեղի է ունենալու ամսին 16-ին, հինգշաբթի օրը առաւօտեան ժամը 10-ին, Նոր-Բեհլութեան փողոցից, տուն Սարգսեանցի, դէպի Մոզնու սբ. Գեորգ եկեղեցին և այնտեղից խօշիվանքի հանգստարանը:

ԹԻՖԼԻՍԻ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, հոկտեմբերի 16-ին,

Հայոց զբամաշիական Ակումբի խումբը, մասնակցութեամբ պ. Արամեանի, կը ներկայացնէ

I

«ՓԱՄԱՆԱԿԱՎԻՑ ՍԷՐ»

Կօմէդիա 4 արարուածով.

II

Պ. ԱՂԱՄԵԱՆ կը ներկայացնէ

«ՏԱՐՈՆՅՈՒՆ ԾԵՐԸ» հեղ. Եղեկեանի.

III

«ՄԱԽՄՈՒՐ ՍԱԼՓՍ ՄՆԱՅ»

Վ. օր. 1 արարուածով հեղ. Չմշկեանի.

Սկիզբն է 8 ժամին:



Պատկերազարդ ԳԱՍԱԳԻՐ-ԻՆՔՆԱՌՍՈՒՑԻՉ ԹՈՒՍԱՅ ԼԵԶՈՒԻ Լ. ԽԱՆ Աղեանցի գրաւաճառների մօտ 20 կօպէկ:

15—24 (Հ.)

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ ցանկանում է ունենալ ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ ԿԱՄ ԳՐԱԳՐԻ ՊԱՇՏՈՆ խանութիւնում կամ գրասենեակներում, Թիֆլիս կամ Թիֆլիսից դուրս: Հասցեն թողնել «Մշակի» խմբագրատանը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԹՇԿԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՅԼՏՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԿՆԴԵՂ



ՄԵՇ ԵՒ ՓՈՒՔՐ ՄԿՆԵՐԸ կատարելապէս ոչնայնելու համար: Արդիւնի գինը 1 ռ. 50 կ. Արկիլի 1/4 արժէ 60 կ.:

Հեղուկ բաղաձիւ ջնեղի դէմ: Սրուակի գինը, վրձինով միասին 1 ռուբլի:

Լուցեցեք, բողոք ոչնայնելու փոշի: Դո-Գլխաւոր պահեստ Թիֆլիսում է. Գ. Բ. Գ. Ս. Ա. Կի ղեղատան ապրանքների մագազինում, Վճոնոն հիւրանոցի տակ, Ջուբալովի տանը:

րակի գինը 1 ռ. 20 կ. գուտապէրի մեքենան աւանձին. 1/2 դօրակ 65 կ. Սժրակայի օժոն, Ռիս Գուտամանի, ձիերի սմաղկները ամեն օր օժելու համար, պահպանում է ամբողջ ճարտուց և նախկին միջոցին թուլանալուց: Դորակի գինը 1 ռուբլի:

Կուղբի ճարպի օժոն, պահում է խոնաւութեան դէմ և կակուղ դրութեան մէջ կօշիկները, բոտիները, ձիերի սանձերը: Գինը 75 կօպ.

Մազերի ներկ, սև, շաքանակաբոյս և չէկ: Մի անգամ ներկված մազերը իրանց գոյնը պահում են մինչև վեց շաբաթ: Ներկված մազերը չէ կարելի գանազանել բնական մազերից: Արկիլը 3 ռուբլի.

Ռիս. Գուտաման

19—100

ԹՈՅԼՏՈՒԹԻՒՆ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԹՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



Էլէկտր-Melange. Մազերի արագ և առատ բուսացնելու համար և նրանց պահպանելու թափախուց: Գինը 2 ռ. սրուակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ուսուսերէն, Ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Բաղաւոր—Eugénie. Գաղինեա և պակի փունջի ծաղիկները, երբայն շինքին և ձեռքերին քնշուցիւն և փափկութիւն, նոյնպէս և մարմարիօնի սպիտակութիւն տալու համար, շուշանի և վարդի ամուշանոտութեամբ, նոյնպէս կաշու անհարթութիւնը և բիծերը ոչնայնելու: Գինը 1 ռ. 75 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ուսուսերէն, Ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով:

Կարմրաղեղ—Eugénie. Եղուկ, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ սրբում երեսի ջրոյնից: Առաջարկվում է մանաւանդ թատրոնների և պարահանդէսների համար: Գինը 1 ռ. 50 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ուսուսերէն, Ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Այդ բոլոր երեք կամեախական արդիւնքները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պահանջում իրանց մէջ որ և է վնասակար նիւթեր:

Բէրթա Ռիս.

ԱՐՏՈՒՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ ՊՈՄԱԿ

Իսկական «Pasta Eugénie», գերազանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անախորժ երևոյթների դէմ: Տալիս է երեսի գոյնին երիտասարդական թարմութիւն և զեղեցկութիւն: Գինը մի սրուակի համար 1 ռ. 60 կ.

Քինին-ըլէկտրական պօմազ պերուական բաղաւոր, մազերը սնուցնելու, խտացնելու և մեծացնելու համար: Գ. 2 ռ. սրուակի համար:

Չեղբերի պօմազ: Գինը սրուակի համար 1 ռ. 30 կ.: Իւրաքանչիւր սրուակի վրա գտնվում է պաշտպանողական դրոշմ, մի «Երեւոսակ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugénie» սպիտակ և վարդաբոյս փոշի: Գ. արկիլի, վրձինով 1 ռ. 50 կ. առանց վրձինի 1 ռ. 20 կ.

Մազերի ներկը երեք գոյնի. սև, շաքանակաբոյս և բաց-չէկ. Գ. արկիլի 3 ռ. ներկը Ռիս Գուտամանի գործարանի:

Գլխաւոր պահեստ Թիֆլիսում է. Գ. Բ. Գ. Ս. Ա. Կի ղեղատան ապրանքների մագազինում, Վճոնոն հիւրանոցի տակ, Ջուբալովի տանը:

67—100

ՄԻ ՎԱՐՃՈՒՆԻ, որ աւարտել է Թիֆլիսի Գայեանեան դպրոցը, ՑԱՆԱՆՈՒՄ Է ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՄԱՍՆԱՌՐ ԳԱՍԵՐ ՈՒՆԵՆԱՎ: ՀԱՄԱԶԱՅՆ Է ՆՈՅՆՊԵՍ ՄԱՆԱՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՄ ԵՒ ՊԱՐԱՊԵԼ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԵՑ: Հասցեն իմանալ «Մշակի» խմբագրատանը: